ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Աննա Անտոնյան[1]

ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Բանալի բառեր՝ *տաբակաթ ժանր, միջնադարյան արձակ, պատմագրական և վարքագրական ժանրեր։*

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել արաբամուսուլմանական միջնադարյան գրավոր մշակույթում ձևավորված *տաբակաթ* (*ṭabaqāt)* ժանրը, որը ժանրին հատուկ գործառույթներ է ձեռք բերել 9-րդ դարում։ Սակայն, տաբակաթը որպես ենթաժանր կարելի է հանդիպել դեռևս արաբական կենսագրական բառարաններում։ Իսկ ո՞ւմ կողմից, ո՞ր աշխատությամբ և պատմական ինչպիսի՞ դարաշրջանում է հիմք դրվել տաբակաթ ժանրին, ինչո՞վ է պայմանավորված եղել տաբակաթի առաջացումն ու սրընթաց զարգացումը, ինչպիսի՞ պատմագրական և վարքագրական այլ ժանրերով են ստեղծագործել իսլամում մեծ դերակատարում ունեցած անձանց կենսագրությունները ներկայացնելիս միջնադարյան գրավոր մշակույթում (9-11-րդ դդ.) և ինչո՞վ է տաբակաթ ժանրն առանձնանում պատմագրական և վարքագրական այլ ժանրերից։ Այս հարցերին կփորձենք պատասխանել մեր հոդվածում։

9-րդ դարն ականատես է լինում խալիֆայության ներսում մշակութային բազմազանությանը։ Աբբասյան խալիֆներին հաջողվում է իրենց վերահսկողությունը հաստատել նվաճված և իսլամացած երկրների վրա։ 9-րդ դարում խալիֆները,

[1] ՀՀ ԳԱԱ, ԱԻ, Արաբական երկրների բաժին

առհասարակ, մեծ ուշադրություն էին դարձնում գիտությանն ու գիտնականներին՝ վերջիններիս մեծ պատվի արժանացնելով[2]:

Այս ժամանակաշրջանում արաբական արձակը աննախադեպ վերելք էր ապրում, միմյանց զուգահեռ զարգանում էին վարքագրական և պատմագրական ժանրերը: Այդ ժանրերի զարգացումը տեղի էր ունենում իբրև ժամանակի պահանջների արձագանք: Արաբական միջնադարյան գրականության արձակ ժանրերի ձևավորումն ու հետագա զարգացումը գործնական նշանակություն է ունեցել արաբների համար: Խնդիր է եղել դարերով կուտակված պատմական գիտելիքն ու նախնիների մասին հիշողությունները՝ կապելով իսլամի հետ, բերել-հասցնել մինչև իրենց ապրած ժամանակաշրջանը և փոխանցել հաջորդ սերունդներին:

Տաբակաթ ժանրի համակողմանի ընկալելու համար, նախ անհրաժեշտ է հասկանալ միջնադարյան արաբական արձակի կարևորագույն առանձնահատկություններից մեկը՝ նրա հատվածական բնույթը: Միջնադարյան արաբական տեքստերը բաժանվում էին մանր հատվածների, որոնցից յուրաքանչյուրը նվիրված էր մի առանձին իրադարձության, ասույթի, մտքի և այլն: Ըստ արաբական բանասիրական ավանդույթի այս հատվածները, որոնք կազմում են արաբական միջնադարյան արձակ տեքստը, կոչվում են *խաբարներ (բոց. լուր, հաղորդագրություն, տեղեկատվություն):* Պրոֆ. Դ. Հովհաննիսյանը իր «Իբն Կուտայբայի՝ Գիրք պոեզիայի և պոետների մասին» աշխատությունում բազմակողմանիորեն բացատրում է *խաբար (kẖabar)* եզրույթի իմաստը՝ բառացիորեն այն ներկայացնելով իբրև «հաղորդագրություն», «նորություն», այսինքն՝ ցանկացած տիպի հաղորդագրություն՝ լինի դա խաբարի հերոսի անվան մասին կամ նրա ցեղի մասին կամ էլ լինի ծագումնաբանական որևէ այլ

[2] هادي ر.، أبن سعد ومنهجه في الطبقات الكبير "دراسة في السيرة النبوية"، جامعة الموصل، 2014، ص. 5.

տեղեկություն: Ապա Դ.Հովհաննիսյանը, վկայակոչելով միջնադարյան արաբական բառարաններից «Ալ-Մուջիմ ալ-վասիտը» (Āl-muʿǧam āl-Wasīṭ) գրում է. «*Խաբարն այն է, ինչը փոխանցվում է բանավոր կամ գրավոր*»: *kẖa-ba-ra* արմատի մեջ Դ. Հովհաննիսյանը վեր հանել է նաև «*փորձ ունենալ*», «*փորձից ճանաչել*» «*լավ տեղյակ և գիտակ լինել*» իմաստները[3]:

Արաբական արշավանքներին և մեծ ու հզոր կայսրության ստեղծմանը հաջորդած գիտության ի հայտ գալուց հետո խաբարը դադարում է լինել սինկրետիկ: Այն վերածվում է վերածնված գիտության կողմից օգտագործվող մի գործիքի, և այդ նույն գիտության ճյուղավորումը նպաստում է նաև խաբարի ճյուղավորմանը, վերածվելով *ախբարի՝* (ʾakẖbār) (պատմա-կենսագրական գրականության ժանրի անվանում, որը առաջացել և զարգացել է հիմնականում 9-րդ դարում)՝ ի ծառայություն գիտության (ʿilm)[4]:

Պետք է նշել, որ խաբարային հիմք ունեցող տեքստերի հսկայական համալիրը արտահայտվել է մի շարք գրավոր ժանրերի միջոցով, որոնցից հիմնականներն են՝ *ախբարները (ʾakẖbār) (հաղորդագրություններ), անսաբները(ʾansāb) (ծագումնաբանություն), կիսասներ(qiṣaṣ) (պատմություններ), ֆադաիլներ (faḍāʾil) (արժանիքներ), մաղազիներ (maġāzī) (նվաճումների մասին պատմություններ), սիրաներ (sīar) (վարքագրություններ), տաբակաթներ (ṭabaqāt) (դասակարգեր)* և հենց *թավարիխները (tawārikẖ) (տարեգրություններ):*

Առանձին վարքագրական ժանրեր զարգացել են միմյանցից անկախ և գրական տարբեր զարգացումների արդյունքում, սակայն հետապնդել են միևնույն նպատակը. այն է՝ հավաստի տեղեկություններ փոխանցել հաջորդ սերունդներին իսլամի և

[3] Оганесян Д., Книга Поэзии и Поэтов Ибн Кутайбы, Ереван, 1986, с.67-68.
[4] Նույն տեղում, էջ 56:

խալիֆայության մեջ մեծ դեր խաղացած տարբեր անձանց, հատկապես՝ հադիսագիրների մասին:

Վերոնշյալ գրական ժանրերից ամենավաղ ձևավորվածը *կենսագրական բառարանների ժանրն է*, որը հաճախ հանդիպում է նաև *տաբակաթ* եզրույթով: Մի շարք արաբական բառարաններում *ṭabaqāt* բառը ներկայացվում է իբրև «*ṭabaqa» (շերտ) բառի հոգնակին, որը միավորում է այն ամենը, ինչը միմյանց հավասարազոր է: Այն ունի նաև ճաշատեսակների տեսականի իմաստը*», ինչպես նաև սահմանվում է իբրև «*երկու հավասար երևույթների համընկնում, իսկ այդ համընկնումը համաձայնեցված է*»: Նույն արմատով կազմված է *al-ṭabaq* բառը՝ մատնանշելով մարդկանց մի խմբի, որը հավասար է իր նման մեկ այլ խմբի: Հենց *ṭabaqāt* բառն ինքն իրենով նշանակում է «*մարդկային դասակարգեր՝ ըստ աստիճանակարգային սկզբունքի*»[5]:

Տաբակաթ եզրույթը հանդիպում ենք նաև Ղուրանում, որն ունի «շերտ» կամ «խավ» իմաստները: Ղուրանում այս եզրույթն ունի «մակարդակ», «շերտ, խավ» նշանակությունները[6]:

Ֆ. Ռոզենտալը, բավականին հստակ ներկայացնում է «տաբակաթ» եզրույթի իմաստը և դրա իմաստային զարգացումը: *Ṭabaqāt* նշանակում է «շերտ»: Ժանրը ենթադրում է, որ պետք է ներկայացվի միևնույն դասակարգին կամ շերտին պատկանող սերունդների շղթան՝ հիմնված ժամանակագրական հաջորդականության վրա: Իմաստաբանական տեսանկյունից *ṭabaqāt* եզրույթին նախորդել է *qarn* (բոց.՝ դար) բառը՝ օգտագործվելով «սերունդ» իմաստով: Բառագետները փորձել են պարզել *ṭabaqāt* –ի ժամանակային տարածման ճշգրիտ սահմանը: Ոմանք կարծել են, որ

---

[5] العين ١٠٨/٥ والقاموس المحيط ١١٦٥

[6] Robinson C., Al-Mu'afā b. 'Imran and the Beginning of Tabaqat Literature, Journal of the American Society, vol. 116, no.1, 1996, New York, p. 114-116.

մի տաբակաթը տևել է քսան տարի, իսկ ոմանք էլ, հիմնվելով մարգարեական ավանդույթի վրա, ըստ որի՝ *«Իմ ազգը բաղկացած է հինգ տաբակաթներից, որոնցից յուրաքանչյուրը տևում է քառասուն տարի»*, պնդել են, որ յուրաքանչյուր տաբակաթի միջին տևողությունը քառասուն տարի է[7]:

Տաբակաթ ժանրի առաջացմանն ու դրանում առկա նյութի դասակարգման մեթոդաբանությանն անդրադարձել է գրականագետ Մուհամմադ Ամինն իր հոդվածներից մեկում, որը նվիրված է լեզվական գիտությունների և իսլամական օրենքի (շարիաթի) միջև հարաբերակցությունը բացատրելուն և ցույց տալուն, որ Ղուրանը արաբական քաղաքակրթության բոլոր գիտությունների աղբյուրն է հանդիսանում և ամուր կապ է ստեղծում արաբերենի և կրոնական գիտությունների միջև: Ապա հեղինակը լեզվաբանական տեսանկյունից անդրադարձ է կատարում «տաբակաթ» հասկացությանը: Ըստ Մ. Ամինի տված սահմանման, արաբերենում «տաբակաթ» նշանակում է *ցանկացած առարկայի ծածկող,* ինչպես նաև՝ *անդամներ, ոհմակ, հոտ, խմբավորումներ և դասակարգեր* իմաստը: Երբեմն կիրառվում է նաև *սերունդներ, տներ, վիճակներ* իմաստով և իբրև դար (qarn) բառի հոմանիշ[8]:

«Տաբակաթ» եզրույթը հադիսագետները, կրոնագետներն ու լեզվաբանները տարբեր կերպ են ընկալել: Երբեմն *տաբակաթ* ժանրի փոխարեն օգտագործվել են «Տղամարդկանց[9] մասին

---

[7] Rosenthal F., A History of Muslim Historiography, Leiden, 1968, p.93.

[8] العدوية م.، علم الطبقات بين علماء الحديث وأهل الأدب، 7.03.2015 https://bit.ly/3odl46O (հասանելի է 20.10.2022 թ.-ի դրությամբ)

[9] Չնայած այն հանգամանքին, որ այդ գիտությունը կոչվում է «Տղամարդկանց մասին գիտություն», այնուամենայնիվ, հայտնի կանանց մասին նույնպես տեղեկություններ են մեզ հասել այս գիտության միջոցով: Այսպես, օրինակ, Իբն Սաադը իր «Քիթաբ ալ-տաբակաթ ալ-քաբիր»-ի 8-րդ հատորը նվիրել է իսլամի կայացման մեջ մեծ դեր խաղացած կանանց գործունեությանը: Այս թեմային ավելի մանրամասն կանդրադառնանք նաև սույն աշխատանքի 3-րդ գլխում:

գիտություն» կամ «*Գիտություն դասակարգերի մասին*» (ʿilm al-riǧāl/ ʿilm al-ṭabaqāt) ժանրային անվանումները: Տաբակաթը կարճ ժամանակում կարողացել է դառնալ արաբամուսուլմանական քաղաքակրթությանը հատուկ մի յուրօրինակ գիտություն[10]: Այս կապակցությամբ թե՛ Ֆ. Ռոզենտալը և թե՛ Մ. Յանգը միաձայն համաձայնվել են, որ *«կենսագրական բառարանների» կամ «տաբակաթի»* նման ժանր գոյություն է ունեցել նաև հունական վարքագրական գրականության մեջ, այնուամենայնիվ, «տաբակաթ» ժանրը բուն արաբական գրական երևույթ է[11]:

Տաբակաթի՝ իբրև ժանրի ի հայտ գալը հանդիսացել է ժամանակի պահանջ: Վաղ շրջանի վարքագրական գրականության ժանր հանդիսացող *տաբակաթի* զարգացումը համընկել է կրոնաիրավական դպրոցների՝ մազհաբների[12] ձևավորման շրջանի հետ, որոնք, իրենց հերթին ապավինել են

---

[10] العدوية م.، في نفس المكان.

[11] Young M., Arabic Biographical Writing, Cambridge 1990, p. 169. և RosenthalF., նշվ. աշխ. էջ 93:

[12] Maḏhab (հոգնակի՝māḏāhib, «ճանապարհ») եզրույթը լայնորեն օգտագործվում է իսլամի բոլոր բնագավառներում՝ աստվածաբանության, ֆիկհի, հադիսագիտության, փիլիսոփայության, սուֆիզմի մեջ: Բանաստեղծական և աստվածաբանական գրականության մեջ, մազհաբն օգտագործվում է ուսմունք (որպես մակալայի հոմանիշ), վարդապետության, մեկնաբանության, դպրոցի (աստվածաբանական, փիլիսոփայական, հադիսի դպրոց) իմաստով, սուֆիների մոտ նշանակել է նաև խորհրդավոր ուղին անցնելու միջոց: Հատուկ և ամենակայուն իմաստով մազհաբն աստվածաբանական-իրավական դպրոց է: Վաղ իսլամում մազհաբներ էին, կոչվում նաև տարբեր իրավական ուսմունքներ (օրինակ՝ Սուֆյան ալ-Սաուրի): Երբ դրանք լուծարվեցին և միախառնվեցին սուննիական ֆիկհի մեջ, մազհաբներ սկսեցին կոչվել նախ և առաջ չորս հիմնական աստվածաբանական և իրավական դպրոցները՝ հանաֆիական, մալիքիական, շաֆիական և հանբալիական: Հետագայում նրանց ավելացավ հինգերորդ «կանոնական» մազհաբը՝ իմամականների աստվածաբանական և իրավական դպրոցը՝ ջաաֆարիական ուղղությունը: Ներկայումս ջաաֆարիականությունն Իրանի պետական իրավական համակարգն է հանդիսանում:- Негря Л.,, Ислам Энциклопедический Словарь, Москва, 1991, с.152.

Ղուրանին և Սուննային՝ որպես իրենց դրույթների օրինականությունն ապացուցելու աղբյուրներ[13]: Տաբակաթի, ինչպես նաև իսլամական պատմագրական և վարքագրական ժանրերի զարգացումը պայմանավորված է եղել առաջին հերթին հադիսագիտության զարգացմամբ:

Սկզբնապես տաբակաթ ժանրով գրված բոլոր աշխատություններում, ինչպես օրինակ՝ Իբն Սաադի «Ալ-Տաբակաթ»-ում, թվարկված են եղել բոլոր այն անձինք, որոնք կարևոր դեր են խաղացել հադիսներ փոխանցելու գործում: Առանձին քաղաքների մասին վաղ պատմություններում, որոնցից է Ասլամ իբն Սահլ ալ-Վասիտի ալ-Ռազզազ Բահշալի[14] «Վասիտի պատմությունը» (Baḥšal “Tārīkẖ al-Wāsiṭ”), ներկայացվել է միայն հադիս հաղորդողների դասը: Միայն հետագայում են տաբակաթներում սկսել ներառել նաև այլ մասնագիտություն ունեցող անձանց, իսկ նմանատիպ աշխատության օրինակ կարող է ծառայել՝ ալ-Զահաբիի[15] «Իսլամի պատմություն»-ը (“Tārīkẖ al-ʾIslām”)[16]:

Հադիս հաղորդողների մասին գիտությունը դարձել է գիտական հատուկ ճյուղ, որի կազմած ցուցակները (համառոտ կենսագրական տվյալներով և բնութագրերով) կազմված են ըստ անվանումների այբբենական կարգի կամ էլ ըստ սերունդների դասակարգերի (տաբակաթ), որոնք երբեմն կազմում են կենսագրական բառարանների հսկայական հատորներ: Հադիսների իմացությունը դարձել է մասնագիտություն, որով

[13] Mojaddedi J., The Biographical Tradition in Sufism: The Ṭabaqāt Genre from Al-Sulamī to Jāmī, Richmond, 2001, p.175.

[14] Ասլամ իբն Սահլ ալ-Վասիտի ալ-Ռազզազ Բահշալի կյանքից ոչինչ հայտնի չէ: Ենթադրաբար իր մորական պապը եղել է ալ-Խատիբ ալ- Բաղդադի «Բաղդադի պատմություն» (Al-Ḵhaṭīb al-Baghdādī Taʾrīkh Baghdād) գրքի հեղինակը:

[15] Հայտնի իմամ, իսլամի գիտակ, ծագումով թուրքմեն է եղել: Ապրել է յոթերորդ դարում, հայտնի «Մեծ մեղքեր» աշխատության հեղինակն է:

[16] Rosenthal F., նշվ. աշխ., էջ 94:

զբաղվել են տասնյակ, հարյուրավոր, հազարավոր մարդիկ մուսուլմանական տարբեր երկրներում[17]:

Տաբակաթ ժանրի ձևավորմանը նպաստել է նաև տարբեր ոլորտներում ներգրավված բազմաթիվ արաբ գիտնականների անունները սերունդներին փոխանցելու նպատակը: Տաբակաթն՝ իբրև առանձին գիտություն, որոշակի օրինաչափություններ և սկզբունքներ է կիրառել կենսագրական բառարաններ կազմելիս: Քերականագետների նման տաբակաթների հեղինակները մարդկանց դասակարգել են իրենց աշխատություններում, գրանցել են նաև այն ամենը, ինչ որ մեջբերվել է այդ անձանց մասին խաբարներում, սիրաներում և այլ ժանրերում: Նմանատիպ գրքերից են՝ ալ-Մուբարրադի «Գիրք՝ բասրացի քերականագետների և նրանց մասին խաբարների» (Ṭabaqāt fī al-Naḥawyīn al-Baṣryin wa Akẖbārīhim) (9-րդ դար), Իբն Մութազի[18] «Գիրք՝ բանաստեղծների դասակարգերի մասին»-ը(Ṭabaqāt al-Šuʿarāʾ)[19]:

Իբրև առանձին ժանր տաբակաթն ունեցել է նյութը դասակարգելու իր սեփական օրինաչափությունները: Դեռ ավելին, տաբակաթ ժանրով գրված տարբեր աշխատությունների մեջ կենսագրական նյութի դասակարգման մեթոդները տարբեր են եղել, չնայած այն ընդհանուր նպատակին, որն ունեցել են բոլոր գրքերը, այն է՝ ծառայել Ղուրանին և Սուննային: Հռչակավոր անձանց դասակարգել են՝ կա՛մ հաշվի առնելով նրանց որևէ մազհաբին պատկանելությունը կա՛մ պարզապես ըստ

[17] Большаков О., "Очерки истории арабской культуры, Москва, 1982, с. 237.

[18] Իբն ալ-Մուʾթազը (1.11.861, Սամարա - 17.12.908, Բաղդադ) արաբ բանաստեղծ և բանասեր է եղել: Աբբասյան տոհմի Ալ-Մուʾթազ խալիֆի որդին: Նա դաստիարակվել է պալատում, ստացել բազմակողմանի կրթություն: Նրա բանաստեղծություններում գերակշռում են սիրային, բնությունը գովերգող բանաստեղծությունները: Նա ստեղծագործել է նաև գովերգության և պախարակումների ժանրերում:

[19] العدوية م.، في نفس المكان.

այբբենական կարգի: Տաբակաթ ժանրով ստեղծագործելիս ժամանակի հայտնի գիտակները տարբեր տարբեր սկզբունքներ են մշակել: Շատերի մոտ առաջին սկզբունքը կրոնն է, և անգամ տաբակաթ բառը հադիսագետները վերցրել են որոշ հադիսներից: Երկրորդ սկզբունքը քանակի սկզբունքն է. ըստ որի մի գրքի որևէ դասակարգում ընդգրկված անձանց թիվը տարբերվել է մեկ այլ գրքի միևնույն դասակարգի մեջ ներառվածների թվաքանակից[20]:

Տաբակաթներ կազմող հեղինակները մեծ կարևորություն են տվել ժամանակային գործոնին: Տարբեր է եղել հադիսագետների և գրականագետների վերաբերմունքը ժամանակային գործոնի նկատմամբ. հադիսագետները հույժ կարևորություն են տվել ժամանակի ճշգրիտ հիշատակմանը, քանի որ խնդիր է եղել ապացուցելու փոխանցողների հաղորդած նյութի ճշմարտացիությունը, մինչդեռ գրականագետները հետաքրքրված էին նյութի գեղագիտական կողմով:

Ինչ վերաբերում է կենսագրությունների դասակարգման այբբենական սկզբունքին, ապա վերջինս ժամանակի ընթացքում ավելի ու ավելի շատ կողմնակիցներ է ձեռք բերել: Ավելի ուշ շրջանում մարդիկ նախընտրել են խառը բաժանում իրականացնել, ինչպես դա տեղի է ունեցել 14-րդ դարի կենսագիր Իբն Ֆարհունի «Մալիքիների պատմություն» (Al-tārīkẖ al-Mālikī) աշխատությունում[21]:

Բացի վերոնշյալ չափանիշներից, գոյություն են ունեցել նաև մարդկանց՝ ըստ զբաղմունքի (հադիսագետներ, իրավաբաններ, դատավորներ, քերականագետներ և բանասերներ, բանաստեղծներ և գրողներ, երաժիշտներ և երգիչներ, բժիշկներ և աստղագետներ), որևէ գաղափարական շարժմանը պատկանելության (սուֆիներ, ճգնավորներ, ալիականներ,

[20] العدوية م.، في نفس المكان.

[21] Rosenthal F., նշվ.աշխ., էջ.94:

խարիջիներ, շիաներ, մալիքիներ[22], շաֆիներ[23] և այլք), բնակության և գործունեության վայրի (քաղաք կամ շրջան) կամ թվարկված բոլոր ցուցանիշների համադրությամբ դասակարգելու չափանիշներ[24]: Երբեմն միևնույն մասնագիտությամբ և խմբին պատկանող գործիչները բաժանվել են ենթախմբերի: Օրինակ, Իբն Սալամը բանաստեղծներին բաժանել է երկու կատեգորիաների, դրանք են՝ անապատաբնակ *(բադավի)* և քաղաքաբնակ *(հադառ)* բանաստեղծները: Իբն Սալամը նախապատվություն է տվել անապատից սերող բանաստեղծներին, յուրաքանչյուր տաբակաթում ներառելով չորս բանաստեղծի՝ նշելով անգամ պոետների ապրած գյուղերի անվանումները[25]:

Դասակարգման տարածված մեթոդներից էր նաև անձանց դասակարգումը ըստ նրանց ապրած և ստեղծագործած բնակավայրի, քանի որ համարվել է, որ տվյալ միջավայրը կարող է ազդեցություն թողել այդ անձանց մտավոր գործունեության վրա: Ինչպես օրինակ, Իբն Սաադը նախ ներկայացրել է Մուհամմադ մարգարեի այն երևելի զինակիցներին, որոնք Մադինայից են սերել, ապա նրանց հաջորդել են Մեքքայից, Տայիֆից, Եմենից և Յամամայից սերողները: Իբն Սաադի մոտ հաճախ են տեղի ունեցել կրկնություններ, քանի որ պատահել է այնպես, որ միևնույն մարդը մի վայրից տեղափոխվել է մեկ այլ վայր, այսպիսով մի քանի անգամ հիշատակվելով տարբեր տաբակաթներում:

Պետք է նշել, որ չնայած տաբակաթ ժանրն ունի բազմաթիվ ընդհանրություններ վերոնշյալ կենսապատմագրական ժանրերի

---

[22] Մալիքիական մազհաբը սուննիական չորս իրավական դպրոցներից մեկն է, որի հիմնադիրն եղել է Մալիք իբն Անասը ութերորդ դարում:

[23] Շաֆիական մազհաբը սուննիական չորս իրավական դպրոցներից մեկն է, որի հիմնադիրն եղել է Մուհամմադ իբն Իդրիս ալ-Շաֆին 8-9 դարերում:

[24] Большаков О., նշվ. աշխ., էջ 242:

[25] العدوية م.، في نفس المكان.

հետ, այնուամենայնիվ տաբակաթի և այդ ժանրերի միջև կան էական տարբերություններ։ Այսպես. անսաբն ավելի մեծ ժամանակահատված է ընդգրկում, քան տաբակաթը։ Նասաբը՝ տոհմաբանությունը, տալով արաբական ցեղերի ծագումնաբանությունը, հասնում է մինչև անհիշելի ժամանակներ, մինչդեռ տաբակաթը ներկայացնում է իսլամում նշանակալի դեր խաղացած անձանց կյանքի նկարագրությունը։ Տաբակաթը իր համակարգողական բնույթով գրեթե չի տարբերվում անսաբից, սակայն տաբակաթը բացառապես կրոնամուսուլմանական է և ունի կրոնական-տեղային բնույթ՝ կապված իսլամն առաջինը ընդունելու («al-sābiqa»-ի) սկզբունքի և տարածաշրջանի հետ, մինչդեռ նասաբը արյունակցական-ազգակցական կապերի, ընդհանրությունների ամբողջությունն է, որ ծագումնաբանական գծով առնչվում է ընդհանուր նախնու հետ[26]։

Ի տարբերություն սիրայի՝ վարքագրությունների, տաբակաթը մեկնաբանությունները ներկայացնում է վերջում առանց հաղորդողների շղթան՝ իսնադն ընդհատելու, և տեղեկություններ տրամադրելիս ավելի օբյեկտիվ է և ավելի շատ է ուշադրություն դարձնում բուն իրադարձություններին։ Համեմատելով տաբակաթը մաղազի ժանրի հետ ակնառու է դառնում, որ վերջինս կենտրոնանում է այն իրադարձությունների վրա, որոնք պատմում են Մուհամմադ մարգարեի ռազմական արշավանքների և նվաճումների մասին՝ առանց իսնադներ ներառելու։

Տաբակաթ ժանրի վերջնական ձևավորումը կապվում է արաբ կենսագիր, պատմագիր, հադիսագետ և խաբարների գիտակ Իբն Սաադի (784-845 թթ.) հետ, ով հաճախ աղբյուրներում

[26] Էլոյան Ա., «Ծագումնաբանության ձևավորումը և «նասաբ» ժանրը արաբամուսուլմանական (6-9-րդ դդ.) գրավոր մշակույթում (Աբուլ-Աբբաս Ահմադ իբն Յահյա իբն Ջաբիր ալ-Բալազուրի)», էջ 55, Երևան 2009

հիշատակվում է *ալ-Վակիդիի քարտուղար* մականունով: Իբն Սաադի «Դասակարգերի մեծ գիրք» (Kitāb al-Ṭabaqāt al-Kabīr) երկում տաբակաթը դրսևորվում է արդեն իբրև ինքնուրույն կենսապատմագրական ժանր:

«Ալ-Տաբակաթ»-ը մի շարք հատկանիշներով առանձնանում է տաբակաթ ժանրով գրված այլ ստեղծագործություններից: Ի տարբերություն կենսագրական բառարանների ժանրին պատկանող այլ աշխատությունների, որոնք հիմնականում պարունակել են անվանացանկեր, կրճատ տոհմանուններ, ծննդյան և/ կամ մահվան տարեթվեր, «ալ-Տաբակաթ»-ի ութ հատորներում զետեղված են ամբողջական կենսագրություններ: «Ալ-Տաբակաթ»-ը բովանդակային առումով ներառում է երկու հիմնական մասեր՝ *վարք մարգարեականը* և *զինակիցների ու անսարների մասին պատմություններ:* Իբն Սաադը ընգրկել է նաև ականավոր գիտնականների, ինչպիսիք են՝ Յահյա իբն Մաինը, Մաան իբն Իսան, Սուֆյան իբն Այնը և Իբն Ալան, կենսագրական տվյալները՝ դրանք համեմելով բազմաթիվ պատմություններով:

Հավաստի հաղիսներ փոխանցելու և իսնադի շղթան անխաթար ներկայացնելու շնորհիվ Իբն Սաադը համարվել է արժանահավատ աղբյուր, ում հղել են նաև հետագա շրջանների հեղինակներ: Ի տարբերություն իր ուսուցիչ ալ-Վակիդիի, որն «ալ-Մաղազի» աշխատությունում ներկայացրել է Մուհամմադի քարոզի մադինայական շրջանը, Իբն Սաադը Մուհամմադի վարքագրությունը ներկայացնելիս անդրադարձել է նաև մարգարեի մեքքայական քարոզի շրջանին՝ շարադրելով Մուհամմադի մանկության, երիտասարդության, նախասիրությունների, ընտանիքի, ծնողների, կանանց, քարոզի երկու փուլերի, արշավանքների, արձակած հրամանների մասին:

Այսպիսով, ուսումնասիրելով տաբակաթ ժանրն ու տաբակաթ եզրույթի իմաստաբանական գործառույթները ,

եզրահանգել ենք, որ, տաբակաթ ժանրը *9-րդ դարում ձևավորված միջնադարյան արաբական պատմագրական և վարքագրական առանձին ժանր կամ կենսագրական բառարանների ժանրի ենթաժանր է, որն իրականացնում է արաբամուսուլմանական միջավայրի երևելի անձանց դասակարգում՝ հիմնված այդ անձանց ունեցած ընդհանուր հատկանիշների վրա։ Այդ հատկանիշներն էլ սահմանում են տաբակաթում ներառված անձանց դասակարգման տարբեր մոտեցումները, որոնցից ամենատարածվածներն են այբբենական և աշխարհագրական սկզբունքների հիման վրա կատարվող դասակարգումները։* Հատկանշական է, որ տաբակաթ ժանրի վերջնական կայացումը կապված է Իբն Սաադի «Դասակարգերի մեծ գիրք» (Kitāb al-Ṭabaqāt al-Kabīr) երկի հետ։

THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH-CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE

Anna Antonyan

(Summary)

The paper is an attempt to shed light on some specifics of the development of tabaqat genre in Arab-Muslim medieval prose, which presented the life and activities of Prophet Muhammad in a new way. More sophisticated literary techniques, which did not deny the existing historiographical and behavioral genres, were applied here.

The main objectives of the study are to highlight the main features inherent to the tabaqat genre and to compare it with other biographical genres.

The study is based on the work of the Arab chronicler and biographer Ibn Sa'd "The Great Book of Classes" (Kitāb al-Ṭabaqāt al-Kabīr), the first book written in the tabaqat genre. The work had a great impact on writers in the later years contributing to the final formation of the Arab-Muslim concept of the world and the history of Islam in the IX century.

ФОРМИРОВАНИЕ ЖАНРА ТАБАКАТ В АРАБО-МУСУЛЬМАНСКОЙ ПИСЬМЕННОЙ КУЛЬТУРЕ IX ВЕКА

Анна Антонян

(Резюме)

Статья представляет собой попытку пролить свет на некоторые особенности развития жанра табакат в арабо-мусульманской средневековой культуре. Жанр табакат по-новому представил жизнь и деятельность пророка Мухаммеда, заняв свое место среди уже существующих историографических и поведенческих жанров. В данной статье имеется несколько основных положений, первое из которых – выделение основных черт жанра табакат. В статье рассмотрим предпосылки формирования жанра табакат, методологии и подходы, используемые авторами жанра, а также дадим определение жанру, сопоставив его с другими биографическими жанрами. Наше исследование основано на произведении арабского летописца и биографа Ибн Саада «Великая книга классов» (Китаб аль-Табакат аль-Кабир), которая считается первой полноценной книгой, написанной в жанре табакат. Указанное произведение оказало большое влияние на авторов жанра последующих лет, способствуя окончательному формированию арабо-мусульманской концепции мира и истории ислама IX века.